ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 726-Ա/2 **19.05.2023 թ.**

ՎԵՆԵՏԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ 60-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԻԵՆԱԼԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱՎԱՐԻ ՀԱՄԱԴՐՈՂԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏ(ՆԵՐ)Ի ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Վենետիկի ժամանակակից արվեստի 60-րդ միջազգային բիենալեին մասնակցելու նպատակով հայկական տաղավարի համադրողի և արվեստագետ(ներ)ի ընտրության համար մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Խզմալյանին:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության կրթության,

գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

«_____» _____ 2023 թվականի N _____ հրամանի

ԿԱՐԳ

ՎԵՆԵՏԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐՎԵՍՏԻ 60-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԻԵՆԱԼԵԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՂԱՎԱՐԻ ՀԱՄԱԴՐՈՂԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԵՏ(ՆԵՐ)Ի ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Վենետիկի ժամանակակից արվեստի 60-րդ միջազգային բիենալեին մասնակցելու նպատակով հայկական տաղավարի համադրողի և արվեստագետ(ներ)ի ընտրության համար մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) անցկացման կարգը (այսուհետ՝ Կարգ) և պայմանները:

2. Մրցույթով երաշխավորվում է մասնակիցների ընտրության թափանցիկությունն ու հավասարությունը՝ իրենց մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան, անկախ ազգությունից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

3. Մրցույթն անցկացնում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

4. Մրցույթի նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու համար նախատեսված դրույթների կատարման անմիջական պատասխանատուն Հանձնաժողովի քարտուղարն է:

5. Մրցույթին մասնակցելու իրավունք ունեն 18 տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները և ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիները:

6. Մրցույթն անցկացվում է հայեցակարգի ներկայացման (պրեզենտացիա) և հարցազրույցի միջոցով: Մրցույթին մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) անհրաժեշտ է ներկայացնել հայտ, որը ներառում է հետևյալ փաստաթղթերը.

1) լրացված դիմում-հայտաձև՝ համաձայն Հավելված 1-ի.

2) համադրողի և արվեստագետների ինքնակենսագրությունները.

3) ցուցադրության հայեցակարգի (կոնցեպտ) նկարագիրը (2-5 էջ).

4) ցուցադրության կազմակերպման նախահաշիվը.

5) տեղեկություն հայտատուի կողմից համաֆինանսավորման մասին:

7. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված փաստաթղթերը ներկայացվում են հայերեն և անգլերեն՝ venetiklabiennale@escs.am էլեկտրոնային հասցեով:

8. Սույն կարգի 6-րդ կետով սահմանված փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է 2023 թ. նոյեմբերի 1-ը:

9. Հանձնաժողովի քարտուղարը ամփոփում է սահմանված Կարգով ստացված հայտերը և դրանք ներկայացնում Հանձնաժողովին՝ նախապես ծանոթանալու նպատակով:

10. Մրցույթի անցկացման նիստի օրը, ժամը և վայրը որոշվում է Հանձնաժողովի նախագահի կողմից, որի մասին պաշտոնապես հայտարարությունը հրապարակվում է Նախարարություն պաշտոնական կայքէջում և էլեկտրոնային փոստով տեղեկացվում մասնակիցներին: Մրցույթն անցկացվում է հայտարարության մեջ նշված ժամկետում և վայրում:

11. Մրցույթի մասնակիցը Մրցույթին ներկայանում է անձը հաստատող փաստաթղթով և ցուցադրության հայեցակարգի համապատասխան նյութերով:

12. Հանձնաժողովի նիստն իրավազոր է Հանձնաժողովի անդամների առնվազն կեսից ավելիի մասնակցության դեպքում:

13. Հանձնաժողովը յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է անհատապես:

14. Մասնակիցների ընտրությունը կազմակերպվում է փակ քվեարկությամբ՝ սույն Կարգով սահմանված քվեաթերթիկի միջոցով՝ համաձայն Հավելված 2-ի:

15. Մրցույթում հաղթող է ճանաչվում Հանձնաժողովի անդամների առավելագույն «կողմ» ձայներ ստացած մասնակիցը:

16. Քվեարկության արդյունքում ձայների հավասար բաշխվածության դեպքում Հանձնաժողովը անցկացնում է մրցույթի երկրորդ փուլ՝ առավելագույն ձայներ ստացած մասնակիցների վերջնական ընտրությունն իրականացնելու նպատակով:

17. Մրցույթի երկրորդ փուլն անցկացվում է նույն կամ Հանձնաժողովի նախագահի կողմից նշանակված օրը՝ սույն Կարգով սահմանված պահանջներին համապատասխան: Մրցույթի երկրորդ փուլում նոր դիմում-հայտեր չեն ընդունվում, և հայտի փոփոխություն չի թույլատրվում:

18. Մրցույթի ավարտից հետ Հանձնաժողովի քարտուղարը ամփոփում է Մրցույթի արդյունքները, կազմում է Մրցույթի արձանագրությունը և այն ներկայացնում է Հանձնաժողովի նախագահի ստորագրմանը:

19. Մրցույթի արդյունքներն ամփոփելուց և արձանագրությունը հաստատելուց հետո Մրցույթի հաղթող ճանաչված մասնակցի տվյալները Նախարարությունը ներկայացնում է Վենետիկի բիենալեի կոմիտե՝ հաստատման նպատակով:

20. Մրցույթի արդյունքները հրապարակվում են Վենետիկի բիենալեի կոմիտեից հաստատում ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

21. Հանձնաժողովի որոշումները վերջնական են և բողոքարկման ենթակա չեն:

Հավելված 1

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ
_____-ԻՑ
(անուն, ազգանուն, հայրանուն)

_____
(հասցե, հեռախոս, էլեկտրոնային հասցե)

ԴԻՄՈՒՄ

Ձեզ եմ ներկայացնում Վենետիկի ժամանակակից արվեստի 60-րդ միջազգային բիենալեին մասնակցելու նպատակով հայկական տաղավարի համադրողի և արվեստագետ(ներ)ի ընտրության մրցույթին մասնակցելու համար պահանջվող փաստաթղթերի փաթեթը:

Նախագծի անվանում՝ _____

Նախագծի համադրող՝ _____
(անուն, ազգանուն, հայրանուն)

Նախագծում ներգրավված արվեստագետներ՝ _____
(անուն, ազգանուն, հայրանուն)

_____

Դիմող՝ _____ _____
անուն, ազգանուն ստորագրություն

«___»_____2023 թ.

Հավելված 2

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

2023 թ. _____ _____-ին ժամը _____ կայացած Վենետիկի ժամանակակից արվեստի 60-րդ միջազգային բիենալեին մասնակցելու նպատակով հայկական տաղավարի համադրողի և արվեստագետ(ներ)ի ընտրության համար մրցույթի

	ԿՈՂՄ
Նախագիծ 1՝ *անվանում* Համադրող՝ *անուն, ազգանուն* Արվեստագետներ՝ *անուն, ազգանուն*	☐
Նախագիծ 2՝ *անվանում* Համադրող՝ *անուն, ազգանուն* Արվեստագետներ՝ *անուն, ազգանուն*	☐
Նախագիծ 3՝ *անվանում* Համադրող՝ *անուն, ազգանուն* Արվեստագետներ՝ *անուն, ազգանուն*	☐

Հանձնաժողովի նախագահ՝ _____*Անուն, ազգանուն*_____
ստորագրություն